

Պոլսոյ Հայոց Պատրիարք
Ն.Ա. Տէր Մեսրոպ Արք. Մութաֆեանի
Առաքելատիպ Յանձնառութիւնը



Գրեց՝ Կարօ Գասապեան

Վերջերս Լոս Անճելըսի մի քանի հայատառ թերթերու մէջ լոյս տեսաւ «Թուղթ առ Մեսրոպ Արք. Մութաֆեան, Պատրիարք Հայոց Թուրքիոյ» գրութիւնը՝ Թորգոմ Փոսթաճեան ստորագրութեամբ:

Պրն. Փոսթաճեան վրդոված է ու այլալից, քանի որ Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Գերշ. Մեսրոպ Արք. Մութաֆեան դատի քաշած է Հ.Բ.Ը.Միութիւնը: Պրն. Փոսթաճեան կը յանդգնի «անվայել» եւ «անսուրբ» որակել Պատրիարքին այս ընթացքը եւ կը յորդորէ որ Հայոց Պատրիարքը «հրաժարի ամէն կարգի անմաքուր արարքներէ եւ յետս կոչէ իր բացած անպատուաբեր դատը»:

Ինչպէս ծանօթ է Պրն. Փոսթաճեան ուխտադրուծ եւ կարգաթող նախկին եկեղեցական մըն է, այսինքն՝ վրիպած եւ կարգազուրկ կղերական մը, եւ իր այս հանգամանքով հիմա հրապարակ իջած է եւ ի պաշտպանութիւն Հ.Բ.Ը.Մի գրիչ կը շարժէ: Չենք կարծեր որ իր անկապ քարոզներն ու անորակ գրութիւնները որեւէ կշիռք ու արժէք կրնան ունենալ, բացի պարզապէս մթնոլորտը ...ապականելէ...:

Թէ ինչու Հայոց Պատրիարքը դատ կը բանայ Հ.Բ.Ը.Միութեան դէմ՝ այդ մասին ոչ մէկ ակնարկութիւն Պրն. Փոսթաճեանի գրութեան մէջ. Ոչ մէկ յիշատակութիւն՝ Հ.Բ.Ը.Մի կեդրոնական վարչութեան որոշումին մասին՝ 2005-ի Յունիսին Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու, Կիպրոսի մէջ: Նոյնպէս, ոչ մէկ յիշատակութիւն Բարերար Կարապետ Մելգոնեանի 1926-ին ստորագրած պայմանագրին մասին:

Պրն. Փոսթաճեան խիստ մտահոգ է «թէ Թուրք պետութիւն եւ թուրք ժողովուրդ ինչպէս պիտի մեկնաբանեն Հայոց Պատրիարքին օտար դատարանի մը մէջ Հայ մեծագոյն բարեսիրական միութեան դէմ բացած դատը»: Արդեօք Պրն. Փոսթաճեան նոյն մտահոգութիւնը ունեցաւ, երբ Հ.Բ.Ը.Միութեան ղեկավարները ասկէ մօտ տարի մը առաջ որոշեցին Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը 2005 Յունիսին վերջնականապէս փակել.- բան մը որ նոյնիսկ իրենք, թուրքերը, չէին կրցած յաջողցնել, երբ 1974-ին օդային ուժաւորութիւններու դիրախ կը դարձնէին «Մելգոնեան»ի շէնքերը:

Նորին Ամենապատուօրին Տէր Մեսրոպ Արք. Մութաֆեան
Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռի արժանաւոր գահակալը,
քաջակորով, բացառիկ կարողութիւններով օժտուած, իմաստուն եւ
զարգացած՝ մեր լաւագոյն եկեղեցականներէն է: Որպէս
երանաշնորհ Զաւէն Պատրիարքի այժմու յաջորդը՝ ան մեծ
պատասխանատուութեամբ հետաքրքրուած է Մելգոնեան
բարերարներու կտակին անեղծ պահպանութեամբ, ինչպէս նաեւ ձեռ
նամուխ եղած է Մելգոնեան Կրթ. Հաստատութեան գոյատեւումը
ապահովելու աշխատանքներուն, որոնցմէ մին է Յունուար 13,
2005-ին Գալիֆորնիոյ բարձրագոյն ատեանին առջեւ յարուցուած
դատական հայցը:

Ի դէպ, դատական ունկնդրութիւնը տեղի պիտի ունենայ 2005
Մարտ 15-ին կ.ա. ժամը 9:15-ին Լոս Անձելըսի դատարանին մէջ,
հասցէ՝ 111 North Hill St., Los Angeles, CA. 90012, Dept. 11, Room
246, Case No. BP089837.

Պոլսոյ Պատրիարքարանի հրապարակած վերջին յաղորդագրութեան
մէջ կը կարդանք.- «Կիպրոսի Մելգոնեան Կրթական
Հաստատութիւնը բաց պահելը Մելգոնեան եղբայրներու տեսիլքը
յարգելու միակ միջոցն է: Եթէ չի փափաքիր աշխարհասփիռ
հայութեան ներկայանալ որպէս անվստահելի հաստատութիւն,
ՀԲԸՄիութիւնը պէտք է հրաժարի Մելգոնեան Կրթական
Հաստատութիւնը փակելու եւ ազգապատկան կալուածները վաճա-
ռելու որոշումէն: Մարդիկ ՀԲԸՄիութեան պէս բարեգործական
հաստատութիւններու ինչու նուիրատուութիւն ընեն, եթէ կեդրոնական
վարչութեան միքանի անդամ յետ մահու արդարութիւն պիտի չընեն
հանգուցեալ բարերարներու յիշատակին եւ կամ չյարգեն իրենց
թողած կտակներուն տրամադրութիւնները»: Նոյն յաղոր-
դագրութեան վերջին պարբերութիւնը՝ «Ամենապատիւ պատրիարք
հայրը արդէն իսկ ազնիւ գտնուած ու իրեն դիմող
Գալիֆորնիաբնակ հայազգի միջնորդներուն պատրաստակամութիւն
յայտնած է Պոլիս այցելելիք պատուիրակութեան մը անդամները
ընդունելու: Յոյսով ենք որ համայն Երոպայի հայութիւնը
հետաքրքրող այս կարեւոր ու նուրբ հարցին իմաստալից լուծում մը
կը գտնուի: Արդարութիւնը մեծապէս կատարուած պիտի ըլլայ եթէ
ՀԲԸՄիութիւնը յետս կոչէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը
փակելու որոշումը: Այս է մեր պատրիարքութեան ցանկութիւնն ու
աղօթքը, որուն համաձայն են աշխարհի չորս անկիւններուն
տարածուած Մելգոնեան սասները»:

2005-ը Հայ գիրերու գիտին եւ հայ դպրոցի սկզբնաւորութեան
1600 ամեակն է: Այս կապակցութեամբ մեր գոյգ Վեհափառ
Հայրապետներուն սրբատառ կոնդակները դեռ վերջերս

կարդացուեցան բոլոր հայ եկեղեցիներու բեմերէն, եւ գրեթէ բոլոր հայ թերթերը տպեցին զանոնք: Առաջին հայ դպրոցը բացուեցաւ առաջին ուսոցչապետ Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ որպէսզի Հայերէն այբուբենը կարելի ըլլար սորվեցնել եւ տարածել: Համայն հայութիւնը հանդիսատրապէս եւ մեծ շուքով պիտի նշէ այս խիստ կարեւոր պատմական հանգրուանը այս տարուան ընթացքին:

ինչ՝ ձախաւեր եւ ցաւալի զուգադիպութիւն, սակայն: ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան որոշումով այս տարի Յունիսին վերջնականապէս պիտի փակուի հայ գիրի ու դպրութեան դարբնոց՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Տայ Աստուած որ Նորին Ամենապատուութիւն Տէր Մեսրոպ Արք. Մովսէսեանի առաքելատիպ յանձնառութիւնը Մելգոնեանի գոյատեւումը ապահովելու համար գալիք սերունդներուն, յաջողութեամբ պսակուի: Ասիկա, ապահովաբար, Հայ գիրերու գիտին եւ հայ դպրութեան 1600 ամեակի առթիւ լաւագոյն նուէրը պիտի ըլլայ տրուած հայ ժողովուրդին:

Նորթրիճ, Փետր. 2005

Կարօ Գասապեան
18927 Prairie St.
Northridge, CA 91324
Tel.(818) 718-9434